Հուսիկ Արա

Դու ես հրաշքը

Իմ հրաշքը դու ես,
որ հայտնաբերել եմ երկրի վրա.
և աշխարհը ափիս մեջ
շրջում եմ Տիեզերական ոգու նման:

Գաղտնիքների գիրքն եմ կարդում հիմա,
որ վաղնջական ու կորած էր.
մարդիկ լսել էին այդ մասին,
բայց երբեք չէին տեսել,
թե ինչպես է բառը առնում թևեր
ու ճախրում է հմայումով քո հայացքի:

Քո մեկ հպումը մարգարե է ինձ դարձրել,
պայծառատես եմ ու գուշակ կես նայվածքիդ շնորհիվ
և քայլում եմ մարդկանց մեջ՝ ինչպես Փրկիչն էր:

Համրին եմ խոսեցնում,
կույրին ստիպում եմ տեսնել
և հարություն եմ տալիս մեռյալներին անգամ:

Ես կարող եմ հասկանալ թռչունների լեզուն,
գազանների հետ զրուցել
և լսել լռությունը ձկների.
մինչև իսկ Էվրիդիկեին ետ բերել անդինից,

որ չհաջողվեց Օրփեոսին:

Քո հրաշքը նախաստեղծ ու սկիզբ է դարձնում
կյանքի կորցրած իմաստները.
տիեզերքում ամեն բան իր տեղում է
ու ճիշտ է նորից,
և գեղեցկությունն է շենշում իր առաջին հմայքով,
որովհետև ժամանակը ուրիշ չափման մեջ է հիմա
և այդ չափը դու ես:

Քո մարմինը լույս է հորդում,
բուրում է հաց
և հոսում է ջուր.
ես հավատո՛ւմ եմ, կրկնվել է դրախտը երկրի վրա:

Թող չասեն,
թե էլի մեկը այդպես սիրել է ինչ-որ մեկին.
երանի ե՛ս լինեի,
և այդ մեկը
քո տեսքն ունենար ու իմ անունը կանչեր: